## ՅԱՆԴԻՊՈՒՄ-ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՅՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ



***ԱրՊՅ հոգեբանական կենտրոնի համակարգողները հունիսի 6-ին հերթական հանդիպումն են ունեցել հանրակրթական դպրոցների ուսուցիչների ու կենտրոնի այցելուների հետ:***

Իր խոսքում հոգեբանական կենտրոնում իրականացված աշխատանքներին անդրադարձավ ԱրՊՅ ռեկտոր Մանուշ Մինասյանը: Նա բարձր գնահատեց կենտրոնի առկայությունը՝ այն որակելով իբրև կադրային դարբնոց, որտեղ կձևավորվեն սեփական ձեռագիր ունեցող հոգեբաններ: «Կենտրոնի աշխատանքների վերաբերյալ ամենամսյա հաշվետվություններն ու ներկայումս քննարկվող հավակնոտ ծրագրերը խոսում են կենտրոնի պահանջվածության մասին: Մենք հետևողական ենք հանրապետությունում հոգեբանական ծառայության կայացման հարցում և մշտապես մեր ուշադրության կենտրոնում ենք պահելու ոլորտի խնդիրները»,- նշել է Մ. Մինասյանը և խրախուսել կենտրոնի աշխատանքներում ընդգրկվածներին:

Իբրև թիրախային խումբ ընտրելով հանրակրթական դպրոցների ուսուցիչներին՝ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Լուսինե Ղարախանյանը հանես է եկել «Յուզական ու մասնագիտական սպառում» թեմայով, որի շրջանակում ներկայացրել է հուզական սպառման պատճառներն ու հետևանքները, ապա խորհուրդներ տվել կանխելու հոգեկան այրման գործընթացը:

«Յուզական ներքին դատարկությունն ինքնին կհանգեցնի մասնագիտական սպառման, ասել է թե՝ եթե իմ ինքնությունը դեֆորմացված է, ապա ես սպառված եմ»,- ասում է Լ. Ղարախանյանը և տալիս սպառման սինդրոմի հոգեբանական նկարագիրը:

Դասախոսությանը հետևել են հոգեբանական վարժությունները:

## ՄԱՅՐ ԲՈՒՅՈՒՄ ՆՇԵԼ ԵՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

***Արդեն մի քանի տարի է, ինչ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ԱրՊՅ աշխատակիցների երեխաների համար կազմակերպվում է տոնական միջոցառում:*** Տոնի կապակցությամբ կազմակերպված ժամանցային շոու-ծրագրի ընթացքում երեխաների կողմից սիրված մուլտհերոսների ու դերասանների մասնակցությամբ կազմակերպվել են խաղ-մրցույթներ, պարեր:






«ԱՐՑԱԽԻ ՅԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

*Յիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*

Յրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զարինե Սառաջյան

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5: Յեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՅԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

***№ 05 (210)***
***հունիս-հուլիս, 2018***


## ՅԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ



***Յուլիսի 4-ին Արցախի Յանրապետության Նախագահի նստավայրում տեղի է ունեցել Արցախի պետական եւ Շուշիի տեխնոլոգիական համալսարանները գերազանցությամբ ավարտած ուսանողներին դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:***

Իր ելույթում Նախագահ Սահակյանն ընդգծել է, որ գիտելիքների նկատմամբ սերը, աշխատասիրությունն ու պատասխանատվության բարձր զգացումը շրջանավարտներին կօգնեն զարգացնել իրենց ունակություններն ու կարողությունները, դառնալ բարձրակարգ մասնագետներ և Արցախի արժանի քաղաքացիներ, ուրույն ավանդ բերել հայրենի երկրի զարգացմանն ու շենացմանը:

«Մենք միշտ հպարտությամբ ենք նշում, որ ունենք հայրենասեր, կիրթ ու զարգացած երիտասարդներ, ովքեր իրենց ծնողների արժանի զավակներն են եւ նրանց պես պատրաստ են անել հնարավորը հարազատ երկրի ու ժողովրդի համար, պաշտպանել ու զորացնել մեր անկախ հանրապետությունը՝ շարունակելով ավագ սերնդի ավանդույթներն ու հայրենանվեր առաքելությունը», - նշել է երկրի ղեկավարը:

ԱրՊՅ 74 և Շուշիի տեխնոլոգիական համալսարանը գերազանցությամբ ավարտած 17 ուսանողների դիպլոմների հետ միասին հանձնվել են նաև դյուրակիր համակարգիչներ:

## «ԱՐՊՅ - 2018» ԱՄԱՌԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ



***Յուլիսի 7-ին Արցախի պետական համալսարանի նախաձեռնությամբ ԱՅ Ասկերանի շրջանի Պատարա գյուղի մերձակա տարածքում մեկնարկեց ուսանողական միջազգային ամառային ճամբար: Ճամբարի հանդիսավոր բացման արարողությանը ներկա էին Արցախի Յանրապետության ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱԳ նախարար Մասիս Մայիլյանը, ՄԵՅՁ նախարար Լեռնիկ Յովհաննիսյանը, ԱրՊՅ ղեկավար կազմը, ուսանողներ Արցախի, ՅՅ և արտերկրի բուհերից, հյուրեր:***

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՅ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհակալություն է հայտնել ծրագրի աջակիցներին՝ նշելով, որ ճամբարի կազմակերպումը ոչ միայն ուսանողների, այլև ԱրՊՅ ղեկավարության երազանքն էր, որն այս տարի, առաջին անգամ համալսարանի կյանքում, հաջողվեց իրողություն դարձնել:

ԱՅ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը ողջույնի խոսքում կարևորել է Արցախում իրականացվող նմանատիպ ծրագրերում հայաստանյան բուհերի ուսանողներին ընդգրկելու իրողությունը: Ճամբարականներին ողջունել է նաև ՄԵՅՁ նախարար Լեռնիկ Յովհաննիսյանը, արտասահմանցի մասնագետներ Էյվրի Քաչկան և Մեթթյու Սթաուբը:

«Իմ բուհը» խորագրով ելույթներով հանդես եկան ԵՊՅ-ն, ՅՊՏՅ-ն, ՅՊՄՅ-ն, ՅՌՅ-ն, ՅԱՅ-ն և ԱրՊՅ-ն ներկայացնող ուսանողները՝ հակիրճ պատմելով իրենց բուհերի ուսանողական կյանքի մասին: Միջոցառման ավարտին ՄԵՅՁ նախարարության նախաձեռնությամբ կայացավ տոնական համերգ, որից հետո օրն ամփոփվեց ճամբարային ընթրիքով: Յավելենք, որ ճամբարը կազմակերպվում է վրանային պայմաններում, 3 փուլով՝ հուլիսի 6-10-ը, 11-15-ը և 16-21-ը: Ճամբարին մասնակցում են ուսանողներ ԱրՊՅ-ից, ՅՅ և արտերկրի բուհերից: Ծրագիրը հագեցած է դասախոսություններով, մշակութաժամանցային միջոցառումներով, էքսկուրսիաներով, հանդիպում - քննարկումներով:

# ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԸ ԴԻՊԼՈՄՆԵՐ ԵՆ ՍՏԱՑԵԼ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ



***Հունիսի 7-ին տեղի է ունեցել մայր բուհի ավանդական միջոցառումներից մեկը՝ մագիստրոսների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էր նաև «Ավրորա» 2017 թ. մրցանակաբաշխության դափնեկիր Թոմ Քաթինան:***

Միջոցառմանը ներկա էին նաև ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ԱԳ նախարար Մասիս Մայիլյանը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, «Ավրորա» հիմնադրամի ներկայացուցիչներ, համալսարանականներ, ծնողներ, հյուրեր, ովքեր, նախքան միջոցառման մեկնարկը, ծաղիկներ են խոնարհել ԱրՊՀ զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

ԱրՊՀ 186 մագիստրոսները, որից 51-ը՝ գերազանցության դիպլոմով, պատիվ են ունեցել դիպլոմներ ստանալու «Ավրորա» մրցանակաբաշխության դափնեկիր Թոմ Քաթինայից, ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանից, ԱԳ նախարար Մասիս Մայիլյանից, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանից և ֆակուլտետների դեկաններից: Ներկաներին առաջինը ողջունեց և շնորհավորեց Սուդանում մարդասիրական գործունեություն ծավալող բժիշկ Թոմ Քաթինան:

«Ինձ համար պատիվ է ոչ միայն Արցախում և Արցախի մայր բուհում լինելը, այլև այսպիսի արարողության մասնակցելը: Արցախի մասին շատ եմ լսել, հատկապես՝ երբ նախորդ տարի Հայաստանում էի, սակայն երբեք չէի պատկերացնի, որ այն այսքան հարազատ կարող է լինել»,- ասում է նա:

Շնորհավորելով շրջանավարտներին՝ Ն.Աղաբալյանը հատկանշեց այն փաստը, որ մագիստրոսները դիպլոմներ են ստանում կարևոր շրջանում և հույս հայտնեց, որ ստացած գիտելիքների շնորհիվ նրանք կկերտեն նոր, ավելի բարեկեցիկ միջավայր՝ նորարարական գաղափարներով և մտքերով:

Օրվա խորհրդի և կարևորության մասին խոսեց ռեկտորը՝ նշելով. «Ամենքդ ձեր կարողություններով և հնարավորություններով նպաստեք մեր երկրի կայացմանը, մեր ձեռքբերումների բազմապատկմանը, և ոչ մի քայլ դեպի հետ»:

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՈՒՐԱԼԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԻՆ




***Հուլիսի 2-6-ը Սվերդլովսկի մարզի Եկատերինբուրգ քաղաքում անց է կացվել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 70-րդ տարեդարձը. արդի մարտահրավերներ և ժառանգություն» խորագրով մարդու իրավունքների 6-րդ ամառային դպրոցը, որին մասնակցել են ԱրՊՀ իրավագիտություն 2-րդ կուրսի ուսանողներ Մերի Գրիգորյանը և Մարինա Գաբրիելյանը: Ամառային դպրոցի կազմակերպիչն է Ուրալի պետական իրավաբանական համալսարանը:***

Ինչպես տեղեկացնում է Ուրալի պետական իրավաբանական համալսարանի www.usla.ru կայքը, համալսարանի ղեկավարությունը ջերմությամբ է ընդունել ամառային դպրոցի մասնակիցներին՝ ծանոթացնելով նրանց նախ համալսարանի պատմության, ուսումնական գործընթացների և առանձնահատկությունների հետ: Ծրագիրը հետաքրքիր էր և հագեցած, որը ներառում էր պատմաճանաչողական էքսկուրսիաներ, հանդիպումներ, խորհրդակցություններ, քննարկումներ գիտնականների, գիտահետազոտողների և պաշտոնատար անձանց հետ: Մասնակիցները հնարավորություն ունեցան ընդլայնելու մասնագիտական կապերը, ձեռք բերել նոր գիտելիքներ և փորձ փոխանակել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Հավելենք, որ ամառային դպրոցին մասնակցել են ուսանողներ ԱՊՀ երկրների բուհերից:



# «ՀՀ ԵՎ ԱՀ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑ





***ԱրՊՀ հրավերով հունիսի 25-ից բուհում հնգօրյա դասընթաց է վարել տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը:***

Դասընթացի շրջանակում բանախոսն անդրադարձել է ՀՀ եւ ԱՀ տեղեկատվական դաշտի կառուցվածքին, հայկական տեղեկատվական հոսքերին՝ որպես միջազգայինի մաս, ապրիլյան պատերազմի դասերին, Ադրբեջանի՝ տեղեկատվական պատերազմ վարելու ներուժին և այլն: Հունիսի 29-ին դասընթացն ամփոփվեց կլոր սեղան-քննարկման ձևաչափով՝ ներգրավելով նաև ոլորտի պաշտոնյաների և լրատվամիջոցների ներկայացուցիչների: Հանդիպմանը միացավ նաև աշխատանքային այցով Արցախում գնվող ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը:



Խնդրի շուրջ տեսակետներ են հայտնել ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը,ԱՀ ՄԻՊ Ռուբեն Մելիքյանը, ԱՀ Նախագահի անվտանգության հարցերով խորհրդական Տիգրան Աբրահամյանը, ոլորտի մասնագետներ:

Սովորական օգտատերը սոցիալական մեդիայում կարող է առանցքային դերակատարություն ունենալ ազգային անվտանգության համար, իսկ «Ի՞նչ պետք է անի պետությունը» հարցին Ս. Մարտիրոսյանը պատասխանում է. «Պետությունը պետք է կրթի»,- և լուրջ անելիքներ տեսնում կրթօջախներում, այդ թվում՝համալսարաններում:

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՎՊՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՎԻԿՏՈՐԻՆԱՅԻ



***Օրերս ԱրՊՀ մի խումբ ուսանողներ Վանաձորի պետական համալսարանում մասնակցել են պատմություն առարկայից կազմակերպված օլիմպիադայի և գրավել մրցանակային տեղեր:***

Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում կազմակերպված օլիմպիադային մասնակցել են ԱրՊՀ պատմության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Էլլադա Հայրապետյանն ու Մերի Սարդարյանը, իրավագիտության բաժնի երրորդ կուրսի ուսանող Էրիկ Լալայանը, ովքեր զբաղեցրել են համապատասխանաբար առաջին, երկրորդ և չորրորդ տեղերը, պարգևատրվել պատվոգրերով և հուշանվերներով: ԱրՊՀ ուսանողները շրջել են Վանաձոր քաղաքով. այցելել Վանաձորի կերպարվեստի թանգարան, Ստեփան Զորյանի տուն-թանգարան, Վանաձորի առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի և այլ տեսարժան վայրեր:

Վիկտորինայի մասնակիցները կարևորում են նման միջոցառումները, որոնք նոր ծանոթությունների և կապերի հնարավորություն են ստեղծում:

# ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՀԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ



***ԱՀ ԿԳՍ նախարարության հրավերով աշխատանքային այցով Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի ղեկավարների հետ հանդիպումներ են ունեցել Որակի ազգային ապահովման կենտրոնի մասնագետները՝ տնօրեն Ռուբեն Թոփչյանի գլխավորությամբ: Հերթական հանդիպումը հունիսի 19-ին Արցախի մայր բուհում էր՝ ԿԳՍ նախարարի մասնակցությամբ:***

Նարինե Աղաբալյանը, հղում անելով Կառավարության 2017 թվականի որոշմանը, որով սահմանվել են բուհերի հավատարմագրման կարգն ու չափանիշները, անդրադարձել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներին:

«Համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետը 2019 թվականի դեկտեմբերի 30-ն է, և մենք հրավիրել ենք կենտրոնի նախագահին և մասնագետներին, որպեսզի ձեզ հետ միասին սկսենք հավատարմագրման գործընթացը, և սա երեք փուլերից բաղկացած գործընթաց է, որը համատեղ պետք է իրականացնենք: Աշխատանքային խումբն արդեն հնարավորություն է ունեցել աշխատելու առանձին բուհերում և հանդիպելու ռեկտորների հետ»,- ասել է նախարարը՝ հույս հայտնելով, որ համատեղ աշխատանքը կարճ ժամանակում շոշափելի արդյունքներ կտա:

Ռ. Թոփչյանը նախ ներկայացրել է հավատարմագրման գործընթացի էությունը և այդ համատեքստում բուհերի անելիքները, ապա պատասխանել ներկաների հարցերին: Անդրադառնալով ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրմանը՝ Ռ. Թոփչյանը նշում է, որ Եվրոպայում այս գործընթացը սկսվել է ծրագրային համապատասխանեցումից, որից հետո միայն՝ ինստիտուցիոնալ: Հայաստանը պիլոտային մի շարք ծրագրերի ներդրմամբ եկել է այն եզրակացության, որ բուհի կառավարման որակի համապատասխանեցումն առաջնահերթ է ծրագրայինից, քանի որ հաճախ կառավարման արդյունավետությամբ է պայմանավորված ծրագրի իրականացման արդյունավետությունը:

«Հավատարմագրումը բուհի հասունության վկայականն է, ուստի նախքան հասունության հայտ ներկայացնելը պետք է անցնել մի քանի փուլեր, որոնցից ամենակարևորը ինքնավերլուծությունն է: Այն հնարավորություն կտա լիարժեք պատկերացում կազմելու ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների մասին և ըստ այդմ մշակելու տեղայնացված ռազմավարություն»,- ասել է Ռ. Թոփչյանը:

Նշենք նաև, որ նախքան այս կազմով հանդիպումը, Հայաստանից ժամանած աշխատանքային խումբը հանդիպումներ է ունեցել ուսանողների, ապա և հավատարմագրման գործընթացում ընդգրկված հանձնաժողովների նախագահների և անդամների հետ:

# ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ԵՆ ՀԱՆՁՆՎԵԼ ՀՐԵՏԱՆՈՒ ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻՆ



***Արդեն երկրորդ տարին է, ինչ ԱրՊՀ-ՊՆ համագործակցության շրջանակում, համալսարանի ֆինանսավորմամբ, ԱրՊՀ ՆԶՊ ամբիոնի հիմքի վրա ձևավորված դասախոսական կազմը պատրաստում է հրետանու կրտսեր հրամանատարներ: Այս տարի համալսարանը թողարկեց հրանոթի հրամանատարների երկրորդ խումբը, որոնք դասընթացներին մասնակցությունը հավաստող փաստաթղթերը ստացան հանդիսավոր պայմաններում:***

Նախքան վկայագրերի հանձնումը՝ դասընթացի վերաբերյալ հակիրճ հաշվետվությամբ հանդես է եկել մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շ.Այդինյանը՝ նշելով, որ դասընթացին նախապես հայտագրված 30 մասնակիցներից միայն 16-ին է հաջողվել ավարտել այն: «Սա խոսում է այն մասին, որ դասընթացավարներն ամենայն լրջությամբ են մոտեցել աշխատանքին, ուստի և արդյունքները պիտի գոհացուցիչ լինեն»,- ասում է Շ.Այդինյանը:

Հրետանավորի առաքելության կարևորությունն ընդգծեցին ԱրՊՀ պրոռեկտոր Վ.Յարամիշյանն ու միջոցառմանը ներկա ՊՆ ներկայացուցիչները՝ բարի ծառայություն մաղթելով տղաներին՝ հրետանավորի պատվաբեր աշխատանքում կայանալու ճանապարհին:



# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



***Այս տարի ԱրՊՀ բակալավրիատն ավարտել է 472 ուսանող, որից 74-ը՝ գերազանցության դիպլոմով: Յուրաքանչյուր տարի ֆակուլտետի ղեկավար կազմը հանդիսավոր պայմաններում է շրջանավարտներին դիպլոմներ հանձնում. դիպլոմների հանձնման առաջին հանդիսավոր արարողությունը բանասիրական, տնտեսագիտական, մանկավարժության և սպորտի ֆակուլտետներում էին:***

Արարողության վայր ընտրելով ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողը՝ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը շնորհավորեց շրջանավարտներին՝ կյանքի կարևորագույն փուլերից մեկը պատվով հաղթահարելու կապակցությամբ:

«Դեռևս չորս տարի առաջ նույն վայրում երդվել եք հավատարիմ մնալ զոհված ուսանող-ազատամարտիկների նվիրական գաղափարներին, շարունակել նրանց գործն ու բարձր պահել պատիվը: Մենք լիահույս ենք, որ այն, ինչ ստացել եք ուսումնառության ընթացքում, կօգնի ձեզ կայանալու իբրև մասնագետ: Հավատացած ենք, որ բնագավառում էլ լինեք, արդարացնելու եք մեր և ձեր ծնողների բոլոր սպասումները»,- բարեմաղթանքի խոսքում ասել է Շ.Այդինյանը:

Բանասերները մասնագիտական լսարանում են կազմակերպել արարողությունը՝ խորհրդանշական պայմաններում ընդունելով շնորհավորանքներ և բարեմաղթանքներ:

«Թող ձեր բոլոր ձեռնարկումներում նախաձեռնողականությունը, արդարամտությունն ու կատարածը լինեն հակակշիռը ձեր պահանջկոտության, պարտքը՝ գերակա իրավունքից»,- հորդորել է բանասիրական ֆակուլտետի դեկան Լ.Մարգարյանը:

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ԷԻՆ

***Հունիսի 13-ին և 14-ին դիպլոմներ են հանձնվել բնագիտական, պատմության և իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի շրջանավարտներին:***



Ուսանողներին շնորհավորանքի և բարեմաղթանքի խոսքեր հղեցին ֆակուլտետների դեկաններն ու ամբիոնի վարիչները, պատգամեցին հավատարիմ մնալ առաջին կուրսում տված երդմանը, բարձր պահել մայր բուհի անունն ու արժանի լինել նրա շրջանավարտը լինելու կոչմանը:

«Ահա այս տղաների հայացքների ներքո դուք երդվել եք չորս տարի առաջ և նույն վայրում եք՝ վերահաստատելու, որ յուրաքանչյուրդ ձեր տեղում արժանի կլինեք նրանց պատգամներին ու գաղափարներին, կշարունակեք և ավարտին կհասցնեք այն, ինչ չեն հասցրել նրանք»,- ասել է բնագիտական ֆակուլտետի դեկան Վոլոդյա Միրզոյանը:

Բնագիտական ֆակուլտետի ուսանողության անունից երախտագիտության խոսք ասաց ֆակուլտետի շրջանավարտներից Լ. Բաղիյանը՝ սեփական օրինակով մատնանշելով ուսումնառության տարիների ձեռքբերումները:

«Չորս տարվա հեռավորությունից գնահատականներ տալն այսօր, ավելի քան երբևէ, հեշտ է: Գուցե անցած ճանապարհի դժվարությունները մոռացել ենք, սակայն արդյունքն ակնհայտ է. այն մենք ենք՝ այնպիսին, ինչպիսին կանք՝ շնորհիվ ձեզ և ձեր աշխատանքի»,- ասում է ուսանողուհին՝ դիմելով դասախոսական կազմին:

# ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ



***Հունիսի 18-ին ԱրՊՀ նախաձեռնությամբ հրավիրվել էր հանդիպում ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչների հետ՝ քննարկելու երկրի ներքաղաքական իրավիճակը:***

Հրավերն ընդունել և ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպման էին եկել «Հայրենիք» խմբակցությունից Ռոմելա Դադայանը, «Դաշնակցություն» խմբակցությունից Դավիթ Իշխանյանը և «Ժողովրդավարություն» խմբակցությունից Վարդգես Բաղրյանը: ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը շնորհակալություն է հայտնել հրավերն ընդունելու համար՝ նշելով, որ ստեղծված իրավիճակում մտավորականը պետք է առաջնորդող դերակատարում ունենա, իսկ ձայնը լսելի պետք է լինի:

Ռեկտորը նաև նշել է, որ ցանկացած երևույթի գնահատական տալուց առաջ պետք է գնահատել նախևառաջ ինքդ քեզ և քո արածը, ապա միայն՝ դիմացինին. «Այսօր բազմաթիվ խնդիրներ կան նաև համալսարանում, որոնց լուծում տալու նախապայմանը բարեփոխումներ սկսելն է առաջին հերթին ինքներս մեզնից, նույն տրամաբանությամբ»:

Քաղաքական գործընթացների վերաբերյալ հանդիպմանը ներկայացած քաղաքական երեք ուժերի համար ընհանուր տեսակետ հայտնեց «Դաշնակցություն» խմբակցությունը ներկայացնող Դ.Իշխանյանը: Վերջինս նկատում է, որ քաղաքական բոլոր ուժերը տարբեր ձևաչափերով քննարկումներ են կազմակերպել երկրի ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ և ունեն հստակ ուրվագծված տեսլական:

«Մեր պետականության և Արցախի Հանրապետության նկատմամբ քաղաքական լուրջ դիվերսիա է իրականացվում: Վտանգված է մեր պետականությունը, մեր սուբյեկտայնությունը», -ասել է Դ.Իշխանյանն ու հավելել, որ իրենք այն համոզմունքին են, որ նախագահը չպետք է հրաժարական ներկայացնի, քանի որ դրան հետևած քաղաքական գործընթացները ավելի լուրջ խնդիրներ կառաջադրեն:

Հանդիպման ընթացքում մտավորականները սուր հարցադրումներով և կառուցողական քննադատություններով բարձրացրել են երկրում առկա մի շարք խնդիրներ՝ ժողովրդի կողմից ընտրված և նրա շահերը ներկայացնող ԱԺ պատգամավորներից պահանջելով քայլեր ձեռնարկել՝ վերադասավորելու իրերի և երևույթների ընթացքը՝ հանուն ազատ, անկախ, արդար և ապահով Արցախի:

# ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻՆ

***Հունիսի 8-ին ԱՀ մշակույթի, երիտասարդության և զբոսաշրջության հարցերի նախարարության նախաձեռնությամբ ԱրՊՀ-ում կայացել է Մխիթարյան միաբանության 300-ամյակին նվիրված գիտաժողով:***



Գիտաժողովին մասնակցում էին ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Մխիթարյան միաբանության պատվիրակությունը, ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը, համալսարանականներ, հյուրեր:

Գիտաժողովի մասնակիցները՝ Վենետիկի Սուրբ Ղազար կղզու դիվանապահ և մատենադարանապետ Հայր Վահան Օհանյանը, Հայաստանի Մխիթարյան ճեմարանի փոխտեսուչ Հայր Գնորգ Սարգսյանը, Վենետիկի Սուրբ Ղազար կղզու վանահայր Հայր Սերոբ Չամուրլյանը, Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Մելանյա Բալայանը և ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանող Արա Զարգարյանը, իրենց ելույթներում անդրադարձան Մխիթարյան միաբանության գիտակրթական և մշակութային գործունեությանը, արժևորեցին նրա նվիրյալներին:

Գիտաժողովը եզրափակվեց «Մխիթար Սեբաստացի» ֆիլմի ցուցադրությամբ:



# ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

***ԱրՊՀ գիտական խորհրդի հերթական նիստում քննարկվեցին համալսարանական կառավարման կարևոր կանոնակարգեր, լսվեցին հաշվետվություններ:***



2017-2018 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին հաշվետվությամբ հանդես եկան ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանն ու գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը՝ մասնավորապես անդրադառնալով հանձնաժողովների նախագահների կողմից նշված թերություններին և առաջարկություններին:

Ի գիտություն ընդունվեցին նաև գիտական խորհրդին կից գործող յոթ հանձնաժողովների ընթացիկ ուսումնական տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունները:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց առանցքային երկու կարգեր, որոնք կանոնակարգում են ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեության գնահատման և տեղեկատվության տարածման ընթացակարգերը: Օրակարգում ներառված հարցերից մեկն էլ վերաբերում էր ԱրՊՀ խորհրդի անդամների ընտրությանը: Տարբեր ստորաբաժանումների կողմից առաջադրված թեկնածուներից գիտխորհուրդը փակ գաղտնի քվեարկությամբ համալսարանի խորհրդի անդամներ ընտրեց բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանին, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանին, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանին, պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, պ.գ.դ., պրոֆեսոր Արարատ Վարդանյանին, ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Հասմիկ Ղազարյանին, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Իրինա Իշխանյանին, կենսաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Հասմիկ Գալստյանին:

Այլ հարցերում գիտխորհուրդը ՀՀ ԲՈԿ-ի վավերացմանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչման Մ.Ջահանգիրյանի հայցը, ապա հաստատեց դոկտորականի մեկ թեմա:

# CERGE-EI ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՑԵԼԵԼ Է ԱՐՊՀ



***Հունիսի 20-ին ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանն ընդունել է CERGE-EI հիմնադրամի նախագահի, տնտեսագիտության պրոֆեսոր Ռանդալ Ֆայլերին: Հանդիպմանը քննարկվել են հիմնադրամի և ԱրՊՀ հետագա համագործակցության առնչվող մի շարք հարցեր:***

Հանդիպմանը ներկա էր նաև արմատներով արցախցի, CERGE-EI ծրագրի (Center for Economic Research and Graduate Education - Economics Institute) ներկայացուցիչ, մասնագիտությամբ տնտեսագետ Գեղեցիկ Աֆունցը, ով ծրագրի շրջանակում ուսում է ստացել Պրահայի Կարլովի համալսարանում՝ խորացնելով իր գիտելիքները տնտեսագիտությունից: Մեզ հետ ունեցած զրույցի ընթացքում Գեղեցիկ Աֆունցը նշել է, որ գալիք ուսումնական տարում ԱրՊՀ-ում նշված ծրագրի շրջանակում կվարի էկոնոմետրիկայի հիմունքներ դասընթացը:

«Ես շատ տպավորված եմ Արցախով: Գեղեցիկը մեզ շատ է պատմել Արցախի ու ձեր ժողովրդի մասին, և մենք որոշել ենք այցելել Արցախ՝ անձամբ տեսնելու և ճանաչելու Արցախը: Ես տեսնում եմ, որ այստեղ մարդիկ ջանում են, որ ամեն ինչ լավ լինի, ես էլ պատրաստ եմ նպաստելու դրան: Մենք շատ ուսանողներ ունենք, ովքեր դասավանդում են ՀՀ-ում, բայց Գեղեցիկը մեր առաջին ուսանողն է, որ դասավանդելու է Արցախում»,-նշել է հիմնադրամի նախագահ Ռանդալ Ֆայլերը՝ հավելելով, որ հիմնադրամը կոչված է զարգացնելու տնտեսագիտությունը հետսովետական երկրներում:

Հյուրերը հանդիպեցին նաև տնտեսագիտության ֆակուլտետի ղեկավարության և ուսանողության հետ: